ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՁԵՌՆԱՐԿ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սույն ձեռնարկը կազմվել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա, սակայն այն չի կարող համարվել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքին և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներին փոխարինող փաստաթուղթ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Ո՞վ ունի ընտրելու իրավունք 4

Ընտրողների ցուցակներ 4

Անձը հաստատող փաստաթղթեր 4

Մասնագետի գործառույթները 5

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿՈՄՊԼԵԿՏ 7

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐ 9

Տեխնիկական սարքավորման տպիչի ստուգում 13

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ 20

Նախքան քվեարկության մեկնարկը 20

Ընտրողների գրանցման քայլեր 28

Ինքնության ստուգում 29

Փաստաթղթի ներմուծում սարքավորման մեջ կամ տվյալների մուտքագրում ստեղնաշարով 30

Տեխնիկական սարքավորման մեջ տվյալների մուտքագրում ստեղնաշարով 36

Մատնահետքի գրանցում և քվեարկության կտրոնների տպում 38

Քվեարկության օրը կազմված լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողներ 40

Զինծառայողներ 45

Մատնահետքերի գրանցում և քվեարկության կտրոնների տպում 48

Ընտրողների մատնահետքի ներմուծման անհնարինություն 49

Քվեարկության կտրոնը ընտրողին տրամադրելը 49

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ 50

ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԸՆԴՀԱՏԵԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 56

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿՈՄՊԼԵԿՏԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ և ՎԵՐԱԴԱՐՁ 67

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 68

ԹՂԹԻ ԳԼԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ 68

ԱՆՁՆԱԳՐԻ ՆՄՈՒՇ 68

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԻ ՆՄՈՒՇ 69

ԿԵՆՍԱՁԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՆՄՈՒՇ 69

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՄՈՒՇ (9-ՐԴ ՁԵՎ) 70

ՍՏՈՒԳՄԱՆ, ԱԿՏԻՎԱՑՄԱՆ և ՄԱՍՆԱԳԵՏԻ ԿՈԴԵՐ 71

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվելու են 2021թ. հունիսի 20-ին:

Ո՞վ ունի ընտրելու իրավունք

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Ընտրողների ցուցակներ

Ազգային ժողովի ընտրություններ ժամանակ ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորման (այսուհետև՝ տեխնիկական սարքավորում) միջոցով ընտրողների գրանցումն իրականացվում է ***միայն հետևյալ ցուցակներում ընդգրկված ընտրողների պարագայում՝***

- ***ընտրական տեղամասի ընտրողների ցուցակ,***
- ***քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակ,***
- ***զորամասում կազմվող ընտրողների ցուցակ:***

Անձը հաստատող փաստաթղթեր

Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ է համարվում՝

- ✓ *անձնագիրը,*
- ✓ *նույնականացման քարտը (ID քարտ),,*
- ✓ *կենսաչափական (բիոմետրիկ) անձնագիրը,*
- ✓ *անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից,*

զինծառայողների համար՝

- ✓ *զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զորամասի կազմված ընտրողների ցուցակում,*

Քվեարկության ժամեր

Քվեարկությունն անցկացվում է ժամը 8.00-ից մինչև 20.00-ն: Ժամը 20.00-ին քվեարկության սենյակում գտնվող, բայց դեռևս չքվեարկած ընտրողներն ունեն քվեարկելու իրավունք:

Մասնագետի ժամանակավոր բացակայության դեպքում նրան կարող է փոխարինել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, կամ էլ նախագահի հանձնարարությամբ՝ հանձնաժողովի քարտուղարը կամ տվյալ պահին գործառույթ չիրականացնող հանձնաժողովի որևէ ազատ անդամ:

! Քվեարկության օրը մասնագետները պետք է ներկայանան տեղամասային կենտրոն ժամը **7:00-ին՝** նախապատրաստական աշխատանքների կատարման նպատակով:

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ

Մասնագետները հանդես են գալիս որպես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) ներկայացուցիչներ և պարտավոր են լինել անկողմնակալ ու չեզոք: Մասնագետների անկողմնակալ վարքը կարևոր է օրինական, թափանցիկ, արժանահավատ և ընդունելի ընտրություններ անցկացնելու համար:

! Մասնագետները չպետք է արտահայտեն քաղաքական նախապատվություններ կամ ուղղորդեն ընտրողներին քվեարկել որոշակի թեկնածուի կամ քաղաքական կուսակցության օգտին: Նրանց արգելվում է կրել ցանկացած նշան, որի միջոցով կարող է դրսևորվել որևէ թեկնածուի կամ քաղաքական կուսակցությանը սատարելու հանգամանք (օրինակ՝ կրել քարոզչական շապիկ, կրծքանշան, դրոշ կամ այլ պարագաներ):

! Մասնագետները պարտավոր են վերնազգեստի վրա տեսանելի ձևով կրել իրենց վկայականը:

Մասնագետի գործառույթները

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ, պետք է՝

- Բացել տեխնիկական սարքավորման ճամպրուկը և ստուգել դրա պարունակությունը
- Տեղադրել տեխնիկական սարքավորումը քվեարկության սենյակում այդ նպատակով հատկացված սեղանին
- Միացնել տեխնիկական սարքավորումը հոսանքի աղբյուրին
- Տեղադրել UPS-ը և ռաուտերը, կարգավորել ներքին ցանցը (մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերի պարագայում)
- **Հետևել տվյալների ստուգման ընթացակարգին (տե՛ս 2-րդ գլուխ «Քվեարկության նախորդ օր»):**
- Անջատել տեխնիկական սարքավորումը անջատիչով, սակայն թողնել միացված հոսանքի սնուցման աղբյուրից
- Անջատել UPS-ը և ռաուտերը անջատիչով, սակայն UPS-ը թողնել միացված հոսանքի սնուցման աղբյուրից (մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերի պարագայում):

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Ժամը 7:00-ից 8:00-ն

- Ընտրական տեղամասի նախագահից ստանալ մասնագետի կոդը պարունակող ծրարը:
- Ակտիվացնել տեխնիկական սարքավորումը:
- Տպել գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը:

Ժամը 8:00-ից սկսած

- Ստուգել ընտրողի ինքնությունը՝ համոզվելով, որ ներկայացված անձը հաստատող փաստաթղթում առկա լուսանկարը համապատասխանում է ընտրողին:
- Ներմուծել փաստաթուղթը սարքավորման մեջ կամ անհրաժեշտության դեպքում մուտքագրել տվյալները ստեղնաշարով:
- Ապահովել ընտրողի մատնահետքի ներմուծումը և տպված քվեարկության կտրոնը տալ ընտրողին:

Քվեարկության ավարտից հետո

- Տպել ավարտական տեղեկանք(ներ)ը:
- Հավաքել տեխնիկական սարքավորման կոմպլեկտը ճամպրուկում:

❗ Քվեարկության օրը տեխնիկական սարքավորումը սպասարկելուց հրաժարվելու, իր լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում մասնագետի նկատմամբ որպես վարչական պատասխանատվության միջոց կիրառվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 40.13-րդ հոդվածով սահմանված տուգանքը՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Իր պարտականությունները կատարելիս մասնագետը սերտորեն համագործակցում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հետ, ում պարտականությունները տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցման գործընթացում սահմանափակվում են հետևյալով.

- Ստանալ տեխնիկական սարքավորման կոմպլեկտը և մյուս պարագաները, տեխնիկական սարքավորման մատնահետքի ընթերցման սկաների ախտահանման համար 70 % ալկոհոլի հիմքով ախտահանիչ անձեռոցիկներ տարածքային ընտրական հանձնաժողովից:
- Ստուգել ստացված պարագաներն ըստ հանձնման ստացականի:
- Խնդրել մասնագետին տրամադրել տեղեկանքներ:
- Փոխարինել մասնագետին նրա ժամանակավոր բացակայության դեպքում կամ հանձնարարել տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին կամ որևէ անդամի ստանձնել մասնագետի դերը:
- Վերադարձնել տեխնիկական սարքավորման կոմպլեկտը և մյուս պարագաները տարածքային ընտրական հանձնաժողով:

⇨ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը վերահսկում է միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին և կարող է հրահանգներ տալ միայն նրանց: Ինչ վերաբերում է մասնագետներին, ապա նրանք տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ ՉԵՆ, ուստի և հանձնաժողովի նախագահը իրավասու ՉԷ նրանց որևէ հրահանգ տալ՝ բացառությամբ Ընտրական օրենսգրքով նախատեսված դեպքերի:

⇨ Վստահված անձինք, դիտորդները, այցելուները, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները չմիջամտելով մասնագետի աշխատանքին՝ կարող են հետևել տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցմանը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿՈՄՊԼԵԿՏ

Յուրաքանչյուր ընտրական տեղամաս ունենալու է առնվազն մեկ տեխնիկական սարքավորում: Որոշ ընտրական տեղամասեր կունենան մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ, որոնց համար կպահանջվեն լրացուցիչ պարագաներ:

ՄԵԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ունեցող ընտրական տեղամասերի համար նախատեսված պարագաներ.

	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ	ՆՊԱՏԱԿ	ՆԿԱՐ
1	**Ճամպրուկ**	**1**	**Տեխնիկական սարքավորումն ապահով պահելու և տեղափոխելու համար:**	
2	**Տեխնիկական սարքավորում**	**1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում**	**Քվեարկության ընթացքում ընտրողներին գրանցելու համար (դրված է ճամպրուկում):**	
3	**Թղթի գլան**	**4 հատ յուրաքանչյուր ճամպրուկում**	**Քվեարկության կտրոններ և տեղեկանքներ տպելու համար (դրված է ճամպրուկում):**	
4	**Տեխնիկական սարքավորման հոսանքի լար**	**1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում**	**Սարքավորումը հոսանքին միացնելու համար (դրված է ճամպրուկում):**	
5	**Հոսանքի տատանումներից պաշտպանող սարք**	**1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում**	**Սարքավորումը հոսանքի տատանումներից պաշտպանելու համար (դրված է ճամպրուկում):**	
6	**Ստիլուս-գրիչ**	**1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում**	**Սարքավորման էկրանին հեշտությամբ աշխատելու համար (դրված է ճամպրուկում):**	
7	**Կտոր**	**1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում**	**Մատնահետքերի ընթերցման սկաները և սարքավորման էկրանը մաքրելու համար (դրված է ճամպրուկում):**	

8	Հոսանքի երկարացման լար	2 հատ յուրաքանչյուր ընտրական տեղամասի համար	Անհրաժեշտության դեպքում հոսանքի վարդակներին հասնելու համար:	
9	Մասնագետի կոդը պարունակող ծրար	1 հատ յուրաքանչյուր ընտրական տեղամասի համար	Պարունակում է մասնագետի վեցանիշ կոդը:	
10	Մասնագետի գործառույթների հուշաթերթ	1 հատ յուրաքանչյուր ճամպրուկում	Մասնագետի հիմնական գործառույթների վերաբերյալ (դրված է ճամպրուկում):	

ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ունեցող ընտրական տեղամասերին կտրամադրվեն 2 կամ 3 սարքավորումներ՝ պայմանավորված տեղամասի ընտրողների թվով և լրացուցիչ պարագաներ, որոնք թվարկվում են ստորև բերված աղյուսակում.

	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ	ՆՊԱՏԱԿ	ՆԿԱՐ
1	Ռաուտեր	1 հատ յուրաքանչյուր ընտրական տեղամասի համար	Տեխնիկական սարքավորումների միջև ներքին ցանց ստեղծելու համար:	
2	Ցանցային լար	Ըստ ընտրական տեղամասում առկա տեխնիկական սարքավորումների թվի	Տեխնիկական սարքավորումները ռաուտերին միացնելու համար:	
3	Ռաուտերի հոսանքի լար	1 հատ յուրաքանչյուր ընտրական տեղամասի համար	Ռաուտերը հոսանքին միացնելու համար:	
4	Անխափան սնուցման սարք (UPS)	1 հատ յուրաքանչյուր ընտրական տեղամասի համար	Էլեկտրաէներգիայի անջատման դեպքում ռաուտերի սնուցումն ապահովելու համար:	

! Ռաուտեր և UPS տրամադրվելու են միայն մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերին: Քանի որ ռաուտերը չունի ներքին մարտկոց, այն մշտապես պետք է միացված լինի հոսանքին UPS-ի միջոցով:

2 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐ

Քվեարկության նախորդ օրը մասնագետը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից ստանում է տեխնիկական սարքավորման կոմպլեկտը և ստուգում է ամբողջականությունը:

Տեխնիկական սարքավորման կոմպլեկտի ստուգում

Մասնագետը տեխնիկական սարքավորման կոմպլեկտի ստուգումն իրականացնում է հետևյալ կերպ.

- Ստուգում է պարագաները՝ ըստ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից ստացված հանձնման ստացականի:
- Ստուգում է տեխնիկական սարքավորման (սարքավորումների) ֆլեշ կրիչների (USB) խցիկի կափարիչի վրա զետեղված պլաստիկ կապարակնիքի սերիական համարը (գտնվում է սարքավորման ստորին հատվածում):

❗ Տեխնիկական սարքավորման ֆլեշ կրիչների (USB) խցիկի վրա զետեղված պլաստիկ կապարակնիքը ՉՊԵՏՔ Է հեռացվի կամ որևէ կերպ վնասվի:

Տեխնիկական սարքավորման տվյալների ստուգում

Պարագաների ստացումը ստուգելուց հետո մասնագետը անցնում է սարքավորման տեղադրմանը:

❗ Տեխնիկական սարքավորումը պետք է հեռու տեղադրվի արևի ուղիղ ճառագայթներից՝ էկրանի պատկերները պարզ տեսնելու և սարքավորման տաքացումից խուսափելու նպատակով:

Հարկավոր է կատարել հետևյալ քայլերը.

Մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս

- Բացել տեխնիկական սարքավորման ճամպրուկը:
- Ճամպրուկից հանել տեխնիկական սարքավորումը, հոսանքի լարը և հոսանքի տատանումներից պաշտպանող սարքը:
- Տեխնիկական սարքավորումը տեղադրել քվեարկության սենյակում այդ նպատակով հատկացված սեղանին:
- Տեղադրել թղթի գլանը տեխնիկական սարքավորման տպիչում, հետևելով ներկայացված քայլերին.

I. Բացել տպիչի կափարիչը՝ սեղմելով տպիչի վերին հատվածում առկա քառակուսի նշանը, այնուհետև համապատասխան «ձայնը» լսելուց հետո՝ զգուշորեն ետ հրել կափարիչը.

II. Տեղադրել թուղթը՝ փայլուն կողմով դեպի ձեզ.

III. Անցկացնել թուղթը տպիչի խցիկի կափարիչի ճեղքով և փակել կափարիչը՝ սեղմելով տպիչի վերին հատվածում առկա քառակուսի նշանը.

IV. Փակել տպիչի կափարիչը՝ սեղմելով տպիչի վերին հատվածում առկա քառակուսի նշանը, մինչև որ կլսեք համապատասխան ձայնը.

! Ստուգելու համար թուղթը ճիշտ է տեղադրված թե՝ ոչ, պարզապես անցկացրեք եղունգով թղթի վրայով: Եթե թղթի վրա սև հետք է մնում, նշանակում է թուղթը ճիշտ է տեղադրված (դա նաև շատ հեշտ է ստուգել, քանի որ գրառումը պետք է լինի թղթի գլանի հակառակ կողմում):



- Միացնել տեխնիկական սարքավորումը հոսանքին՝ օգտագործելով հոսանքի տատանումների պաշտպանող սարքը և տեխնիկական սարքավորման հոսանքի լարը:



- Միացնել տեխնիկական սարքավորումը՝ սեղմած պահելով անջատիչը (գտնվում է սարքավորման ներքևի աջ անկյունում) այնքան ժամանակ մինչև վառվի անջատիչի լուսային նշանը (ոչ պակաս քան 5 վայրկյան):

- Մուտք գործել ընտրողների գրանցման ծրագիր՝ սեղմելով տեխնիկական սարքավորման էկրանի վերևի ձախ անկյունում գտնվող «VIU-Client» նարնջագույն նշանը:

- Ստուգել տեխնիկական սարքավորման **ԺԱՄԸ ԵՎ ԱՄՍԱԹԻՎԸ** (օր, ամիս, տարեթիվ):



Ուշադրություն՝ եթե ամսաթիվը կամ ժամը սխալ է, զանգահարել աջակցման կենտրոն և հետևել հրահանգներին (տե՛ս էջ 56 «Ամսաթվի և ժամի հետ կապված խնդիրներ»):

- Էկրանին կհայտնվի դատարկ դաշտ, որտեղ պետք է մուտքագրել ստուգման վեցանիշ կոդը:
- Մուտքագրել ստուգման վեցանիշ կոդը՝ **111111**:
- Էկրանին կհայտնվի դատարկ դաշտ, որտեղ պետք է մուտքագրել ընտրական տեղամասի համարը:



- Մուտքագրել ընտրական տեղամասի համարը (օր.՝ **1/02**):
- Սեղմել **«ՄՈՒՏՔԱԳՐԵԼ»** կոճակը:

- Էկրանին պետք է հայտնվեն հետևյալ տեղեկությունները.

  - ✓ Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
  - ✓ Ընտրական տեղամասի համարը, հասցեն:
  - ✓ Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը:
  - ✓ Տեղեկատվություն այն մասին, թե արդյոք տվյալ ընտրական տեղամասում քվեարկությունը նախատեսվում է մեկ, թե մեկից ավելի տեխնիկական սարքավորումներով:
  - ✓ Տեղեկատվություն այն մասին, թե արդյոք տվյալ ընտրական տեղամասում նախատեսվում է զորամասում հաշվառված ընտրողների ցուցակով քվեարկություն, թե ոչ:

- Եթե ընտրական տեղամասի համարը ճիշտ է մուտքագրվել, սակայն էկրանին հայտնված տեղեկությունները չեն համապատասխանում տվյալ ընտրական տեղամասին, ապա մասնագետը պետք է այդ մասին անմիջապես հայտնի տեխնիկական աջակցության կենտրոն:

Տեխնիկական սարքավորման տպիչի ստուգում



- Եթե էկրանին հայտնված տեղեկությունները ճիշտ են, ապա սեղմել **«ՍՏՈՒԳԵԼ ՏՊԻՉԸ»** կոճակը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- մասնագետը պետք է անցկացնի տպիչի ստուգում և չի կարող աշխատանքն ավարտել, եթե այդ քայլը չկատարի:

- տպիչի ստուգման արդյունքում պետք է տպվի կտրոն «**ՏՊԻՉԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է ԲԱՐԵՀԱՋՈՂ**» գրառմամբ:



- Կտրոնը պարունակում է նաև տեղեկություն տեղամասի համարի, ստուգման ամսաթվի և ժամի վերաբերյալ:
- Տպիչի ստուգման արդյունքում տպված կտրոնը չպետք է հեռացվի մինչև քվեարկության օրը:
- Տպիչի ստուգման արդյունքում տպված կտրոնը հեռացնել մինչև գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքի տպելը:
- Եթե տեխնիկական սարքավորման տպիչի ստուգման արդյունքում նշված կտրոնը չի տպվում ապա մասնագետը պետք է այդ մասին անմիջապես հայտնի տեխնիկական աջակցության կենտրոն:
- Մասնագետը չի կարող աշխատանքն ավարտել, եթե այդ քայլը չի կատարել:
- Ծրագիրը հիշեցնում (զգուշացնում) է մասնագետին, որ տպիչը չի ստուգել և արգելում է ավարտել աշխատանքը:

- Եթե էկրանին հայտնված տեղեկությունները ճիշտ են և տպիչի ստուգումն ավարտվել է բարեհաջող, ապա սեղմել **«ԱՎԱՐՏԵԼ»** կոճակը:



Տեխնիկական սարքավորման տվյալների և տպիչի ստուգումից հետո մասնագետը **ՊԱՐՏԱՎՈՐ Է**.

- Սեղմել էկրանի վերևի աջ անկյունում գտնվող բացվող ցանկի կոճակը:



- Ընտրել «**ԵԼՔ**» տարբերակը:
- Սեղմել «**ԱՅՈ**» հաստատելու համար գործողությունը:



- Սեղմած պահել սարքավորման անջատիչը (ոչ պակաս քան 5 վայրկյան) մինչև կհայտնվի էկրան՝ «**ԱՆՋԱՏԵԼ**» և «**REBOOT**» կոճակներով:



- Սեղմել «**ԱՆՋԱՏԵԼ**» կոճակը:

Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս

Որոշ ընտրական տեղամասեր ստանալու են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ, որոնց տվյալների ստուգման գործընթացը պետք է իրականացվի ընտրական տեղամասում աշխատող մասնագետների կողմից հետևյալ կերպ.

- Բացել տեխնիկական սարքավորումների ճամպրուկները:
- Ճամպրուկներից հանել տեխնիկական սարքավորումները, դրանց հոսանքի լարերը և հոսանքի տատանումներից պաշտպանող սարքերը:
- Տեխնիկական սարքավորումները տեղադրել քվեարկության սենյակում այդ նպատակով հատկացված սեղաններին:
- Տեղադրել մեկական թղթի գլան յուրաքանչյուր տեխնիկական սարքավորման մեջ (տե՛ս «Թղթի գլանի տեղադրում էջ 10») և իրականացնել տպիչի ստուգում (տե՛ս «Տպիչի ստուգում էջ 13»):
- Միացնել տեխնիկական սարքավորումները հոսանքին՝ հոսանքի տատանումներից պաշտպանող սարքերի և տեխնիկական սարքավորումների հոսանքի լարերի միջոցով (անհրաժեշտության դեպքում՝ կարող են օգտագործվել երկարացման լարեր):
- Հանել ռաուտերը և UPS-ը, ռաուտերը միացնել UPS-ին՝ օգտագործելով ռաուտերի հոսանքի լարը:
- Միացնել տեխնիկական սարքավորումները ռաուտերին՝ օգտագործելով ցանցային լարերը:



- Միացնել UPS-ի հոսանքի լարը վարդակին (անհրաժեշտության դեպքում՝ կարող է օգտագործվել երկարացման լար):



- Միացնել UPS-ը՝ սեղմելով անջատիչը մինչև լսվի համապատասխան ձայնային ազդանշանը:
- Միացնել ռաուտերը՝ սեղմելով անջատիչը մինչև վառվեն լուսային ազդանշանները:
- Միացնել տեխնիկական սարքավորումը՝ սեղմած պահելով անջատիչը (գտնվում է սարքավորման ներքևի աջ անկյունում) այնքան ժամանակ մինչև վառվի անջատիչի լուսային նշանը (ոչ պակաս քան 5 վայրկյան):
- Մուտք գործել ընտրողների գրանցման ծրագիր՝ սեղմելով տեխնիկական սարքավորման էկրանի վերևի ձախ անկյունում գտնվող «VIU-Client» նարնջագույն նշանը:
- Յուրաքանչյուր սարքավորման էկրանին կհայտնվի դատարկ դաշտ, որտեղ պետք է մուտքագրել ստուգման վեցանիշ կոդը:
- Մասնագետներից յուրաքանչյուրը կրկնում է սույն գլխի «Մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրատեղամաս» ենթավերնագրում ներկայացված տվյալների ստուգման քայլերն այն սարքի համար, որն ինքը սպասարկում է և այնուհետև անջատում է սարքավորումը ըստ նույն ենթավերնագրում ներկայացված քայլերի:

3 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն ընտրական տեղամասում սկսվում է ժամը 7:00-ին:

! Քվեարկության օրը մասնագետները նույնպես պետք է ներկայանան ընտրական տեղամաս ժամը 7:00-ին՝ նախապատրաստական աշխատանքների կատարման նպատակով:

Նախքան քվեարկության մեկնարկը

Մասնագետները պետք է համոզվեն, որ տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցման համար անհրաժեշտ բոլոր պարագաները, տպիչի ստուգման արդյունքում տպված կտրոնը տեղում են, իսկ կապարակնիքն՝ անխախտ:

Մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս

Մասնագետը **պարտավոր է**.

- Հեռացնել տպիչի ստուգման արդյունքում տպված կտրոնը:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահից ստանալ մասնագետի կոդը պարունակող ծրարը:
- Միացնել տեխնիկական սարքավորումը՝ սեղմած պահելով անջատիչը (գտնվում է սարքավորման ներքևի աջ անկյունում) այնքան ժամանակ մինչև վառվի անջատիչի լուսային նշանը (ոչ պակաս քան 5 վայրկյան):
- Մուտք գործել ընտրողների գրանցման ծրագիր՝ սեղմելով տեխնիկական սարքավորման էկրանի վերևի ձախ անկյունում գտնվող «VIU-Client» նարնջագույն նշանը:
- Ստուգել տեխնիկական սարքավորման **ժամը և ամսաթիվը (օր, ամիս, տարեթիվ):**



- Էկրանին կհայտնվի դատարկ դաշտ, որտեղ պետք է մուտքագրել ակտիվացման վեցանիշ կոդը:
- Մուտքագրել ակտիվացման վեցանիշ կոդը՝ **222222**:
- Էկրանին կհայտնվի դատարկ դաշտ, որտեղ պետք է մուտքագրել ընտրական տեղամասի համարը:



- Մուտքագրել ընտրական տեղամասի համարը (օր.՝ **1/02**):
- Սեղմել «**ՄՈՒՏՔԱԳՐԵԼ**» կոճակը:

- Էկրանին պետք է հայտնվեն հետևյալ տեղեկությունները.
  - ✓ Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
  - ✓ Ընտրական տեղամասի համարը, հասցեն:
  - ✓ Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը:
  - ✓ Տեղեկատվություն այն մասին, թե արդյոք տվյալ ընտրական տեղամասում քվեարկությունը նախատեսվում է մեկ, թե մեկից ավելի տեխնիկական սարքավորումներով:
  - ✓ Տեղեկատվություն այն մասին, թե արդյոք տվյալ ընտրական տեղամասում նախատեսվում է զորամասում հաշվառված ընտրողների ցուցակով քվեարկություն, թե ոչ:



- Եթե էկրանին հայտնված տեղեկությունները ճիշտ են, ապա սեղմել «**ԱՅՈ**»:

- Էկրանին կհայտնվի ծանուցում «Ընտրական տեղամասի ցուցակն ակտիվացված է», սեղմել «**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**»:



- Եթե ընտրական տեղամասի համարը սխալ է մուտքագրվել, և էկրանին հայտնված տեղեկությունները չեն համապատասխանում տվյալ ընտրական տեղամասին, ապա մասնագետը պետք է սեղմի **«ՈՉ»** և նորից մուտքագրի տեղամասի համարը: Եթե ընտրական տեղամասի համարը ճիշտ է մուտքագրվել, սակայն էկրանին հայտնված տեղեկությունները չեն համապատասխանում տվյալ ընտրական տեղամասին, ապա մասնագետը պետք է այդ մասին անմիջապես հայտնի տեխնիկական աջակցության կենտրոն:

Տեխնիկական սարքավորման ակտիվացումից հետո՝

- Էկրանին կհայտնվի դատարկ դաշտ, որտեղ պետք է մուտքագրել մասնագետի վեցանիշ կոդը:



- Մուտքագրել ծրարում առկա մասնագետի վեցանիշ կոդը:

- Էկրանին կհայտնվի հարց, թե արդյոք մասնագետը ցանկանում է տվյալ պահին տպել գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը:



- Սեղմել «ԱՅՈ» կոճակը **միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությունը ստանալուց հետո:**

- Սպասել մինչև սարքը կտպի գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը:



- Հանձնել տեղեկանքը հանձնաժողովի նախագահին:

- Սեղմել «**ՍԿՍԵԼ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ**» կոճակը:



Գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքում ներառվում է հետևյալը.

- Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
- Ընտրական տեղամասի համարը:
- Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվածների թիվը:
- Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների թիվը (նախքան քվեարկության բացումն այս թիվը պետք է լինի զրոյական):
- Տեղեկանքի տպման ժամը:
- Տեխնիկական սարքավորման համարը:



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

02/04/2017

Գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք

Ընտրական տեղամաս:	20/02
Ընտրողների ցուցակում ընդգրկվածների թիվը	1578
Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների թիվը	0

Տեղեկանքը տպած է 15:06:32

Սարք VAD1

Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս

Մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ ունեցող ընտրական տեղամասերի դեպքում մասնագետները պարտավոր են.

- Միացնել UPS-ը՝ սեղմելով անջատիչը մինչև լսվի համապատասխան ձայնային ազդանշանը:
- Միացնել ռաուտերը՝ սեղմելով անջատիչը մինչև վառվեն լուսային ազդանշանները:
- Միացնել տեխնիկական սարքավորումը՝ սեղմած պահելով անջատիչը (գտնվում է սարքավորման ներքևի աջ անկյունում) այնքան ժամանակ մինչև վառվի անջատիչի լուսային նշանը (ոչ պակաս քան 5 վայրկյան):
- Մուտք գործել ընտրողների գրանցման ծրագիր՝ սեղմելով տեխնիկական սարքավորման էկրանի վերևի ձախ անկյունում գտնվող «VIU-Client» նարնջագույն նշանը:
- Յուրաքանչյուր սարքավորման էկրանին կհայտնվի դատարկ դաշտ, որտեղ պետք է մուտքագրել ակտիվացման վեցանիշ կոդը:
- Մասնագետներից յուրաքանչյուրը կրկնում է սույն գլխի «**Մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս**» ենթավերնագրում ներկայացված ակտիվացման քայլերը այն սարքի համար, որն ինքը սպասարկում է:

Քանի որ մեկ ընտրական տեղամասում կիրառվող բոլոր տեխնիկական սարքավորումները միացվում են ներքին ցանցով և գործում են սինքրոնավորված, դրանք տրամադրում են միատեսակ տեղեկություններով տեղեկանքներ, բացի սարքավորման համարից և տեղեկանքի տպման ժամից:

Ընտրողների գրանցման քայլեր

Ընտրողների գրանցման համար ձեռնարկվում են հետևյալ քայլերը.

Քայլ 1-ին	Ինքնության ստուգում լուսանկարի միջոցով
Քայլ 2-րդ	Անձը հաստատող փաստաթղթի ներմուծում սարքավորման մեջ կամ տվյալների մուտքագրում ստեղնաշարով
Քայլ 3-րդ	Ընտրողի մատնահետքի ներմուծում և քվեարկության կտրոնի տպում

! Մասնագետը չի ստուգում ներկայացված փաստաթղթի վավերականության ժամկետը, քանի որ դա արվում է տեխնիկական սարքավորման միջոցով:

! Ընտրությունների ժամանակ դիվանագիտական անձնագրերը չեն ընդունվում որպես անձը հաստատող փաստաթղթեր:

Ընտրողների յուրաքանչյուր ցուցակով գրանցումն իրականացվում է տարբեր կերպ: Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողը **պետք է մասնագետին ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ:**

Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողներին գրանցելու համար մասնագետը պետք է համոզվի, որ ակտիվացած է «Ընտրողների ցուցակ» կոճակը:



Ինքնության ստուգում

Մասնագետը պարտավոր է.

- Ընտրողից ստանալ անձը հաստատող փաստաթուղթը (միայն բնօրինակը):
- Ընտրողի ինքնությունը ստուգելու համար, պահանջել, որ ընտրողը մի պահ իջեցնի դիմակը:
- Ստուգել, թե արդյոք անձը հաստատող փաստաթղթի լուսանկարը համապատասխանում է ընտրողին:

! Եթե ընտրողը ներկայացրել է մեկ այլ անձի փաստաթուղթ, ապա մասնագետը պարտավոր է տեղեկացնել հանձնաժողովի նախագահին և հանձնել նրան ընտրողի ներկայացրած փաստաթուղթը: Հանձնաժողովի նախագահը պարտավոր է հրավիրել ոստիկանության աշխատակիցների, ովքեր կձեռնարկեն օրենքով նախատեսված միջոցներ:

Փաստաթղթի ներմուծում սարքավորման մեջ կամ փվյալների մուտքագրում ստեղնաշարով

Մասնագետը ներմուծում է ներկայացված փաստաթուղթը տեխնիկական սարքավորման մեջ՝ օգտագործելով սարքավորման համապատասխան հատվածը:

Փաստաթուղթը սարքավորման մեջ ներմուծելիս մեքենայացված ընթերցման համար նախատեսված գոտին պետք է լինի աջ կողմում:

Փաստաթուղթը սարքավորման մեջ ներմուծելուց հետո հնարավոր է 3 արդյունք՝ կանաչ նշան, դեղին նշան կամ կարմիր նշան:

- **Կանաչ նշան՝** ընտրողն ընդգրկված է տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և կարող է գրանցվել:

  ✓ Կանաչ նշանի դեպքում էկրանին հայտնվում են ընտրողի անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը:



- **Դեղին նշան՝** ընտրողի կարգավիճակը հետևյալից որևէ մեկն է.
  1) ընտրողն ընդգրկված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը **ՀԱՅՏՆԻ Է**, թե որ ընտրական տեղամասի ընտրող է,
  2) ընտրողն ընդգրկված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը **ՀԱՅՏՆԻ ՉԷ**, թե որ ընտրական տեղամասի ընտրող է,
  3) ընտրողը ներկայացրել է անձը հաստատող ժամկետանց փաստաթուղթ, մինչդեռ ունի մեկ այլ՝ վավերական փաստաթուղթ:

✓ **Էկրանին հայտնված դեղին նշանը մեկ այլ ընտրական տեղամասի համարի և հասցեի հետ մեկտեղ**, նշանակում է, որ ընտրողն ընդգրկված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը հայտնի է, թե որ ընտրական տեղամասի ընտրող է:



Այս դեպքում մասնագետը.

- Վերադարձնում է անձը հաստատող փաստաթուղթն ընտրողին և հայտնում այն ընտրական տեղամասի համարը և հասցեն, որտեղ նա ընդգրկված է:
- Սեղմում է «**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**» կոճակը հաջորդ ընտրողի գրանցման գործընթացը սկսելու համար:

- **Էկրանին հայտնված դեղին նշանը ներմուծված փաստաթղթի համարի «**օրինակ՝ AP0550045 **և փաստաթղթի համարով ընտրող ցուցակում չկա» ծանուցման հետ մեկտեղ** նշանակում է, որ ընտրողը ընդգրկված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը **ՀԱՅՏՆԻ ՉԷ**, թե որ ընտրական տեղամասի ընտրող է:



Այս դեպքում մասնագետը պարտավոր է.

- Տեղեկացնել ընտրողին, որ նա ընդգրկված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:
- Վերադարձնել անձը հաստատող փաստաթուղթն ընտրողին:
- Սեղմել «**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**» կոճակը հաջորդ ընտրողի գրանցման գործընթացը սկսելու համար:

- **Էկրանին հայտնված դեղին նշանը հետևյալ ծանուցման հետ մեկտեղ «Ընտրողը չի կարող գրանցվել այս փաստաթղթով, քանի որ դրա վավերականության ժամկետը լրացել է և նա ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ»**, նշանակում է, որ ընտրողը ներկայացրել է ժամկետանց անձը հաստատող փաստաթուղթ, մինչդեռ ունի մեկ այլ վավերական փաստաթուղթ:



Այս դեպքում մասնագետը պարտավոր է.

- Տեղեկացնել ընտրողին, որ ներկայացրած փաստաթուղթը ժամկետանց է և նա ունի այլ վավերական փաստաթուղթ: Հարցնել ընտրողին, թե արդյոք այդ փաստաթուղթն իր մոտ է:
- Եթե այո, ապա մասնագետը սեղմում է «**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**» կոճակը գլխավոր էջ վերադառնալու համար և կրկին սկսում գրանցման գործընթացը՝ ներմուծելով ներկայացրած վավերական փաստաթուղթը տեխնիկական սարքավորման մեջ:
- Եթե ոչ, ապա հայտնել ընտրողին, որ քվեարկելու իր իրավունքն իրացնելու հնարավորություն ստանալու համար նա պետք է ներկայացնի վավերական փաստաթուղթը:
- Վերադարձնում է անձը հաստատող փաստաթուղթն ընտրողին:
- Սեղմում է «**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**» կոճակը հաջորդ ընտրողի գրանցման գործընթացը սկսելու համար:

- **Կարմիր նշան՝** ընտրողն արդեն գրանցված է եղել:
  - Եթե կարմիր նշան է հայտնվում, ապա ընտրողի անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը, ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում հերթական համարը հայտնվում են էկրանի վրա «**ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՓՈՐՁ**» ծանուցման հետ մեկտեղ, ինչպես նաև էկրանին հայտնվում է այն փաստաթղթի համարը, որով անձն արդեն գրանցված է եղել տվյալ տեղամասում և գրանցման ամսաթիվն ու ժամը: **Ուշադրություն՝** կարմիր նշանի դեպքում տեխնիկական սարքավորման վրա միանում է ձայնային ազդանշան:



Եթե էկրանին հայտնվում է կարմիր նշան, ապա մասնագետը պարտավոր է.

- Սեղմել «**ՇԱՐՈՒՆԱԿԵԼ**» կոճակը:
- Սպասել մինչև սարքավորումը կտպի կրկնակի գրանցման փորձի տեղեկանք, որը ներառում է.
  - Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
  - Կտրոնի տպման ժամը:
  - Ընտրական տեղամասի համարը:
  - Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը:
  - Ընտրողի անունը, ազգանունը:
  - Կրկնակի գրանցման փորձի ժամանակ ներմուծված փաստաթղթի համարը:
  - Այն փաստաթղթի համարը, որով ընտրողն արդեն գրանցված է եղել տվյալ ընտրական տեղամասում:
  - Առաջին գրանցման ամսաթիվն ու ժամը:


ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՓՈՐՁ

20/01 02/04/2017 15:06:32

Ընտրողների ցուցակում հերթական համարը 323

Անուն ԱՆՈՒՇ

Ազգանուն ՍՈՒՐԵՆՅԱՆ

Փաստաթուղթ: AP0550041

Անձը արդեն գրանցված է եղել այս տեղամասում հետևյալ փաստաթղթի համարով:

AA321456

Գրանցման ժամը

02/04/2017 15:32

- Տեղեկացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Վերջինս նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:
- Ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը և կրկնակի գրանցման փորձի տեղեկանքը հանձնել միայն ոստիկանության ծառայողին:

! Մինչև ոստիկանության ծառայողի մոտենալը մասնագետը շարունակում է գրանցման գործընթացը:

Տեխնիկական սարքավորման մեջ տվյալների մուտքագրում ստեղնաշարով

Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների պարագայում գոյություն ունի երկու դեպք, երբ մասնագետից կարող է պահանջվել անձը հաստատող փաստաթուղթը սարքավորման մեջ ներմուծելու փոխարեն՝ համապատասխան տվյալները մուտքագրել ստեղնաշարով (ձեռքով):

Այդ դեպքերը ներկայացված են ստորև.

1. Անձը հաստատող փաստաթղթի մեքենայացված ընթերցման համար նախատեսված գոտու (սարքավորման մեջ ներմուծվող փաստաթղթի մասի) թերության պատճառով փաստաթուղթը սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում կարող է չընթերցվել:
2. Ընտրողը կարող է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, որը չունի մեքենայացված ընթերցման համար նախատեսված գոտի (անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ (9-րդ ձև), ուստի հնարավոր չէ այն ներմուծել տեխնիկական սարքավորման մեջ:

! Քվեարկության ընթացքում ընդունվում են միայն անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները. արգելվում է ընդունել անձը հաստատող փաստաթղթի ցանկացած պատճեն կամ էլեկտրոնային պատճեն:

! Նույնականացման քարտի համարը մուտքագրելիս լինել ուշադիր՝ մուտքագրել նկարի կողքին նշված համարը և չշփոթել հակառակ կողմում նշված հանրային ծառայությունների համարանիշի հետ, որն ընտրողի գրանցման նպատակով օգտագործվել ՉԻ կարող:

Երկու դեպքում էլ մասնագետը ***պարտավոր է***.

- Սեղմել գլխավոր էջի վրա գտնվող ստեղնաշարի նշանի վրա ակտիվացնելու համար ստեղնաշարը:



- Մուտքագրել համապատասխան դաշտում անձը հաստատող փաստաթղթի համարը: Անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթղթի (9-րդ ձևի) դեպքում մուտքագրվում է 9-րդ ձևի վրա ձեռագիր նշված համարը:
- Սեղմել «**ՓՆՏՐԵԼ**» կոճակը:
- Եթե մասնագետը սխալ է մուտքագրել անձը հաստատող փաստաթղթի համարը, ապա կարող է սեղմել «ՉԵՂԱՐԿԵԼ» կոճակը և կրկին մուտքագրել համարը:
- Այնուհետև կհայտնվի երեք նշաններից (կանաչ, դեղին, կարմիր) որևէ մեկը, և մասնագետը պարտավոր է.
    - Ստուգել, թե արդյոք էկրանին հայտնված տվյալները համապատասխանում են փաստաթղթի տվյալներին:
    - Հետևել վերոնշյալ ընթացակարգերին:

Մատնահետքի գրանցում և քվեարկության կտրոնների տպում

Կանաչ նշանը հայտնվելուն պես մասնագետը պարտավոր է.

- Խնդրել ընտրողին դնել իր աջ ձեռքի ցուցամատը մատնահետքերի ընթերցման սկաների վրա՝ մատի բարձիկը դեպի ընթերցման սարքը:

- Տեխնիկական սարքավորման վրա գտնվող մատնահետքերի սկաների միջոցով ներմուծել ընտրողի մատնահետքը:
- Եթե տեխնիկական սարքավորումն ընդունում է մատնահետքի ընթերցման արդյունքը, ապա ավտոմատ կերպով տպվում է քվեարկության կտրոն, որում ընդգրկված են հետևյալ տեղեկությունները.
  - ✓ Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
  - ✓ Ընտրական տեղամասի համարը:
  - ✓ Քվեարկության կտրոնի տպման ժամը:
  - ✓ Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը:
  - ✓ Ընտրողի անունը, ազգանունը:
  - ✓ Անձը հաստատող փաստաթղթի համարը:
  - ✓ Ընտրողի լուսանկարը, եթե այն առկա է տվյալների շտեմարանում:
  - ✓ Տեխնիկական սարքավորման համարը և քվեարկության կտրոնի հերթական համարը տվյալ տեխնիկական սարքավորումում:


ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20/01 02/04/2017 15:06:32

Ընտրողների ցուցակում հերթական համարը 323

Անուն ԱՆՈՒՇ

Ազգանուն ՍՈՒՐԵՆՅԱՆ

Նկար

Փաստաթուղթ AP0550041

Կտրոն VAD1-7

Եթե տեխնիկական սարքավորումը չի ընդունում մատնահետքի ընթերցման արդյունքը, ապա մասնագետը ***պարտավոր է.***

- Առաջարկել ընտրողին կրկին փորձել ներմուծել մատնահետքը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՎՈՐ Է

Մասնագետը պետք է

- ***ախտահանի մատնահետքերի ընթերցման սկաները 70 % ալկոհոլի հիմքով ախտահանիչ անձեռոցիկով յուրաքանչյուր ընտրողին սպասարկելուց հետո:***

Քվեարկության օրը կազմված լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողներ

Լրացուցիչ ցուցակի ընտրողները մասնագետին են մոտենում ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից գրանցվելուց հետո միայն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության օրը կազմված լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար **ԸՆՏՐՈՂՆ** անձը հատատող փաստաթղթի հետ **պետք է ներկայացնի նաև ստորև նշված տեղեկանքը:**

N_____
« ____» _____ 20 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԿԱԶՄՎՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

_____
անունը, հայրանունը, ազգանունը

Անձը հաստատող փաստաթուղթ _____
սերիա, համար

հաշվառված _____
հաշվառման վայրը

դուրս է մնացել թիվ _____ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը՝

_____ -ին
անունը, հայրանունը, ազգանունը

ընդգրկել _____ թիվ _____ ընտրական տեղամասի
նշվում է համայնքի անվանումը՝ ՏԻՄ ընտրության դեպքում

ընտրողների լրացուցիչ ցուցակում:

Ներկայացվում է տեղամասային ընտրական հանձնաժողով:

_____
(լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը) **(ստորագրություն)**

Կ.Տ.

«____» _____ 20 թվական

Խնդրեք տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին Ձեզ ցույց տալ նշված տեղեկանքը:

ՄԻԱՅՆ ՆՇՎԱԾ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ Է, ՈՐ ԸՆՏՐՈՂԻՆ ՊԵՏՔ Է ԳՐԱՆՑԵԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ:

Մասնագետը լրացուցիչ ցուցակի ընտրողներին գրանցելու համար պետք է սեղմի գլխավոր էջի «Լրացուցիչ ցուցակ» կոճակը:



Փաստաթղթի ներմուծում սարքավորման մեջ կամ տվյալների մուտքագրում ստեղնաշարով

Մասնագետը պետք է փաստաթուղթը ներմուծի սարքավորման մեջ այնպես, որ մեքենայացված ընթերցման համար նախատեսված գոտին լինի աջ կողմում: Եթե փաստաթուղթը սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում չի ընթերցվել կամ ներկայացված փաստաթուղթը չունի մեքենայացված ընթերցման համար նախատեսված գոտի, ապա մասնագետը պետք է փաստաթղթի տվյալները մուտքագրի ստեղնաշարի միջոցով՝ գլխավոր էկրանի վրա սեղմելով ստեղնաշարի նշանի վրա և փաստաթղթի համարը մուտքագրելուց հետո «**ՓՆՏՐԵԼ**» կոճակը:

Փաստաթուղթը սարքավորման մեջ ներմուծելուց կամ վերջինիս համարը սարքավորման մեջ ստեղնաշարով ներմուծելուց հետո հնարավոր է երկու արդյունք՝

- Ընտրողի տվյալները **չեն գտնվել** տվյալների բազայում, **միայն այս դեպքում է ընտրողը համարվում որպես լրացուցիչ ցուցակի ընտրող**:
- Ընտրողի տվյալները **գտնվել են** տվյալների բազայում:

Ընտրողի տվյալները գտնվել են տվյալների բազայում

Այս դեպքը նշանակում է, որ ընտրողը ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից է և նրա տվյալները **սխալմամբ են ներմուծվել որպես լրացուցիչ ցուցակի ընտրող**: Նման ընտրողների դեպքում հնարավոր են հետևյալ չորս դեպքերը.

- **Կանաչ նշան՝** ընտրողն ընդգրկված է տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և կարող է գրանցվել:

- **Դեղին նշանը մեկ այլ ընտրական տեղամասի համարի և հասցեի հետ մեկտեղ՝** ընտրողն ընդգրկված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և սարքավորմանը հայտնի է, թե որ ընտրական տեղամասի ընտրող է:

- **Դեղին նշանը հետևյալ ծանուցման հետ մեկտեղ «Ընտրողը չի կարող գրանցվել այս փաստաթղթով, քանի որ դրա վավերականության ժամկետը լրացել է և նա ունի այլ՝ վավերականության ժամկետը չլրացած, անձը հաստատող փաստաթուղթ»՝** ընտրողը ներկայացրել է ժամկետանց անձը հաստատող փաստաթուղթ, մինչդեռ ունի մեկ այլ վավերական փաստաթուղթ:

- **Կարմիր նշան՝** ընտրողն արդեն գրանցված է եղել:

Բոլոր վերոնշյալ դեպքերում մասնագետը ընտրողին պետք է սպասարկի ինչպես ընտրական տեղամասի ընտրողների ցուցակի ընտրողի և հետևի յուրաքանչյուր դեպքի համար նախատեսված ընթացակարգին:

Ընտրողի փվյալները ՉԵՆ գտնվել փվյալների բազայում ԱՅՍ ԴԵՊՔՈՒՄ ԸՆՏՐՈՂԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿԻ ԸՆՏՐՈՂ Է:

Ստուգելուց հետո, որ էկրանին հայտնված անձը հաստատող փաստաթղթի համարը ճիշտ է, մասնագետը պարտավոր է.

- Ստեղնաշարի միջոցով մուտքագրել ընտրողի հերթական համարը լրացուցիչ ցուցակում:



- Սեղմել «**ՄՈՒՏՔԱԳՐԵԼ**» կոճակը:

❗ Եթե տվյալ հերթական համարն արդեն մուտքագրվել է, էկրանին կհայտնվի այդ մասին հաղորդագրություն, և մասնագետը պետք է մուտքագրի ճիշտ հերթական համարը, որը մասնագետը ճշտում է լրացուցիչ ցուցակում ընտրողի գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամից:



Մատնահետքի գրանցում և քվեարկության կտրոնի տպում

- Ճիշտ հերթական համարը մուտքագրելուց հետո, մասնագետը պարտավոր է.
  - Խնդրել ընտրողին դնել իր աջ ձեռքի ցուցամատը մատնահետքերի ընթերցման սկաների վրա՝ մատի բարձիկը դեպի ընթերցման սարքը:
  - Ընտրողի մատնահետքը ներմուծվում է տեխնիկական սարքավորման մեջ:
- Եթե տեխնիկական սարքավորումը ընդունում է մատնահետքի ընթերցման արդյունքները, ապա այն ավտոմատ կերպով տպում է քվեարկության կտրոնը, որում ընդգրկված են հետևյալ տեղեկությունները.

  - Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
  - Ընտրական տեղամասի համարը:
  - Քվեարկության կտրոնի տպման ժամը:
  - Այն ցուցակի անվանումը, որում ընդգրկված է տվյալ ընտրողը:
  - Ցուցակում ընտրողի հերթական համարը:
  - Ընտրողի փաստաթղթի համարը:
  - Տեխնիկական սարքավորման համարը և քվեարկության կտրոնի հերթական համարը տվյալ տեխնիկական սարքավորումում:



Զինծառայողներ

Զորամասի ցուցակի ընտրողները մասնագետին են մոտենում ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից գրանցվելուց հետո միայն:

! ***«Զորամասի ցուցակ»*** կոճակն ակտիվացված է լինելու միայն այն ընտրական տեղամասերում, որտեղ քվեարկելու են նաև զինծառայողները, մյուս բոլոր ընտրական տեղամասերում այդ կոճակը լինելու է ապաակտիվացված:

Մասնագետը զինծառայողներին գրանցելու համար պետք է սեղմի գլխավոր էջի «Զորամասի ցուցակ» կոճակը:



Տվյալները մուտքագրվում են միայն սպեղնաշարով

Մասնագետը պարտավոր է.

- Մուտքագրել ընտրողի հերթական համարը զորամասի ցուցակում:
-

! ***Ուշադրություն***

Զորամասի ցուցակի ընտրողների հերթական համարները կարող են բաղկացած լինել տառերից և թվերից (օրինակ՝ A5) կամ միայն թվերից:

- Սեղմել «**ՓՆՏՐԵԼ**» կոճակը:
- Էկրանին հայտնվում է հերթական համարը, մասնագետը ստուգում է այն և ճիշտ լինելու դեպքում անցնում է հաջորդ քայլին,

- Եթե տվյալ զորամասի ցուցակում ընդգրկված ընտրողի հերթական համարն արդեն մուտքագրվել է, էկրանին կհայտնվի այդ մասին հաղորդագրություն, և մասնագետը պետք է մուտքագրի ճիշտ հերթական համարը, որը մասնագետը ճշտում է զորամասի ցուցակում ընտրողի գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամից



- սխալ լինելու դեպքում մասնագետը մուտքագրում է ճիշտ համարը:

Համապատասխան ցուցակում ընտրողի հերթական համարը մուտքագրելուց հետո հնարավոր է երկու դեպք՝ կանաչ նշան և կարմիր նշան:

- **Կանաչ նշան՝** ընտրողը դեռևս չի գրանցվել և կարող է գրանցվել ու շարունակել քվեարկությունը:



- **Կարմիր նշանի՝** ընտրողն արդեն գրանցված է եղել: Ուշադրություն՝ կարմիր նշանի դեպքում սարքավորման վրա միանում է ոստիկանական ձայնային ազդանշան:



Այս դեպքում մասնագետը պարտավոր է.

- Սեղմել «ՇԱՐՈՒՆԱԿԵԼ» կոճակը:
- Սպասել մինչև սարքավորումը տպի կրկնակի գրանցման փորձի տեղեկանքը, որը ներառում է.
  - Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
  - Կտրոնի տպման ժամը:
  - Ընտրական տեղամասի համարը:
  - Համապատասխան ցուցակում ընտրողի հերթական համարը:
  - Առաջին գրանցման ամսաթիվն ու ժամը:


ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՓՈՐՁ

20/01 02/04/2017 15:06:32

Զորամասի ցուցակում հերթական համարը 35

Անձը արդեն գրանցված է եղել այս տեղամասի զորամասի ցուցակում նույն համարով:

Գրանցման ժամը

02/04/2017 15:32

- Տեղեկացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին: Վերջինս նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:
- Ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը և կրկնակի գրանցման փորձի տեղեկանքը հանձնել միայն ոստիկանության ծառայողին:

! Մինչև ոստիկանության ծառայողի մոտենալը մասնագետը շարունակում է գրանցման գործընթացը:

Մատնահետքերի գրանցում և քվեարկության կտրոնների տպում

Էկրանին կանաչ նշանի հայտնվելուց հետո մասնագետը պարտավոր է.

- Խնդրել ընտրողին դնել իր աջ ձեռքի ցուցամատը մատնահետքերի ընթերցման սկաների վրա՝ մատի բարձիկը դեպի ընթերցման սարքը:
- Ընտրողի մատնահետքը ներմուծվում է տեխնիկական սարքավորման մեջ:
- Եթե տեխնիկական սարքավորումը ընդունում է մատնահետքի ընթերցման արդյունքները, ապա այն ավտոմատ կերպով տպում է քվեարկության կտրոնը, որում ընդգրկված են հետևյալ տեղեկությունները.
  - Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
  - Ընտրական տեղամասի համարը:
  - Քվեարկության կտրոնի տպման ժամը:
  - Այն ցուցակի անվանումը, որում ընդգրկված է տվյալ ընտրողը:
  - Զորամասի ցուցակում ընտրողի հերթական համարը:
  - Տեխնիկական սարքավորման համարը և քվեարկության կտրոնի հերթական համարը տվյալ տեխնիկական սարքավորումում:


ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20/01 02/04/2017 15:06:32

ԶՈՐԱՄԱՍՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ցուցակում հերթական համարը 323

Կտրոն VAD1-7

Ընտրողների մատնահետքի ներմուծման անհնարինություն

Ընտրողը մատնահետքի ընթերցման համար ներմուծում է իր աջ ձեռքի ցուցամատը: Եթե վերոնշյալն անհնար է ֆիզիկական պատճառներով, ապա մասնագետը սեղմում է «**ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է**» կոճակը այն դեպքում, երբ նշված մատը բացակայում է, կամ «**ԱՆԸՆԹԵՌՆԵԼԻ**» կոճակը այն դեպքում, երբ սարքավորումը չի կարողանում ընթերցել մատնահետքը: Աջ ձեռքի ցուցամատը ներմուծելու անհնարինության դեպքում մատնահետքերը ներմուծվում են հետևյալ առաջնայնությամբ՝ ձախ ձեռքի ցուցամատը, աջ ձեռքի միջնամատը, ձախ ձեռքի միջնամատը, աջ ձեռքի մատնեմատը, ձախ ձեռքի մատնեմատը, աջ ձեռքի ճկույթը, ձախ ձեռքի ճկույթը, աջ ձեռքի բթամատը, ձախ ձեռքի բթամատը:

Սարքավորումը հուշում է, թե որ մատն է անհրաժեշտ ներմուծել:



Այն դեպքում, երբ անհնար է իրականացնել որևէ մատնահետքի ընթերցում, այս քայլը բաց է թողնվում, և քվեարկության կտրոնն ավտոմատ կերպով տպվում է 10-րդ մատը բաց թողնելուց հետո:

! Եթե ընտրողը հրաժարվում է ներմուծել իր մատնահետքը, ապա մասնագետը տեղեկացնում է ընտրողին, որ նա այլ կերպ չի կարող գրանցվել: Եթե ընտրողը դարձյալ հրաժարվում է ներմուծել մատնահետքը, ապա մասնագետը սեղմում է «ՉԵՂԱՐԿԵԼ» կոճակը, անձը հաստատող փաստաթուղթը վերադարձնում ընտրողին և շարունակում սպասարկել մյուս ընտրողներին:

Քվեարկության կտրոնը ընտրողին տրամադրելը

Մասնագետը տեղեկացնում է ընտրողին, որ քվեարկության կտրոնը պետք է պահպանել մինչև քվեատուփին մոտենալը: 1000-ից ավելի ընտրող ունեցող ընտրական տեղամասում մասնագետը հուշում է ընտրողին, թե որ գրանցման սեղանին մոտենալ՝ հիմք ընդունելով քվեարկության կտրոնի վրա առկա ընտրողի հերթական համարը ցուցակում:

4 ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ

Տեղամասում գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը

Տեղամասում գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը տպվում է նախքան քվեարկության մեկնարկը՝ համոզվելու համար, որ գրանցված ընտրողների թիվը զրոյական է, և տեխնիկական սարքավորումը չի օգտագործվել նախքան քվեարկությունը: Գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքի տպման գործընթացը մանրամասն բացատրվել է «Քվեարկության օրը» գլխում:

Տեղեկանքը տրվում է հանձնաժողովի նախագահին:

Ավարտական տեղեկանք

Քվեարկության ավարտից և քվեատուփի կնքումից հետո մասնագետը պարտավոր է.

– Սեղմել գլխավոր էջի տնակի տեսքով կոճակը:



- Սեղմել «**ՓԱԿԵԼ**» կոճակը:



- Էկրանին կհայտնվի հարց, թե արդյոք մասնագետը ցանկանում է ավարտել գրանցման գործընթացը և տպել ավարտական տեղեկանքը:



- Սեղմել «**ԱՅՈ**» **միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությունը ստանալուց հետո:**

- Սպասել մինչև սարքը կտպի ավարտական տեղեկանքը:



- Տպված ավարտական տեղեկանքը հանձնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

Ավարտական տեղեկանքում ընդգրկվում է.

- Ընտրությունների անվանումը, ամսաթիվը:
- Ընտրական տեղամասի համարը:
- Տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը:
- Ընտրական տեղամասի ընտրողների ցուցակից տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների թիվը:
- Քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակից տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների թիվը:
- Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակից տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը:
- Համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված այն ընտրողների հերթական համարները, ովքեր գրանցվել են տեխնիկական սարքավորման միջոցով:
- Տեղեկություն այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով մուտքագրելու միջոցով:
- Տրման ամսաթիվն ու ժամը:
- Տեխնիկական սարքավորման համարը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

02/04/2017

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

քվեարկության ընթացքում տեխնիկական սարքով գրանցված ընտրողների

Ընտրական տեղամաս: 20/02

Տեխնիկական սարքով գրանցված ընտրողների ընդհանուր թիվը	**1450**

Այդ թվում՝

Ընտրողների ցուցակից	**1250**
Տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակից	**10**
Զորամասում հաշվառված ընտրողների ցուցակից	**190**

Ընտրողների ցուցակից գրանցվածների հերթական համարները

1,2,9,65,87*,98*

* - Ընտրողներ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները տեխնիկական սարքավորման մեջ ստեղնաշարով ներմուծելու միջոցով:

Տեղեկանքը տպվել է **03/04/2017 15:06:32**

Սարք **VAD1**

Հանձնաժողովի նախագահ

_____

ստորագրություն

Կ.Տ.

Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնարարում է մասնագետին տպել հավելյալ ավարտական տեղեկանքներ, ապա մասնագետը պարտավոր է.

- Սեղմել «**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**» կոճակը:



- Ցանկից ընտրել անհրաժեշտ ավարտական տեղեկանքների քանակը:



- Սեղմել «ՏՊԵԼ»:

- Սպասել մինչև սարքը կտպի տեղեկանքները:
- Տպված տեղեկանքները հանձնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

! Փակման գործընթացը ՉԻ կարող իրականացվել քվեարկության օրը ժամը 20:00-ից շուտ:

Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս

Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերում տեխնիկական սարքավորումները միացված են ներքին ցանցով և սինքրոնավորված, ինչը նշանակում է, որ բոլոր տեխնիկական սարքավորումների տվյալները նույնն են, հետևաբար, միևնույն ընտրական տեղամասի բոլոր սարքավորումների տպած ավարտական տեղեկանքներում ներառված տեղեկությունները պետք է լինեն նույնը, բացի սարքավորման համարից և տեղեկանքի տպման ժամից: Տեղեկանքների օրինակների անհրաժեշտ քանակը պետք է տպվի ընտրական տեղամասում առկա բոլոր տեխնիկական սարքավորումների, այլ ոչ թե միայն մեկ տեխնիկական սարքավորման միջոցով:

Տեխնիկական սարքավորման անսարքության դեպքում

Եթե անհնար է տեխնիկական սարքավորման միջոցով տպել տեղեկանքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում պետք է կատարվի համապատասխան գրառում:

5 ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԸՆԴՀԱՏԵԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Քվեարկության օրը տարբեր խնդիրներ կարող են ընդհատել տեխնիկական սարքավորման աշխատանքը:

Այս բաժնում անդրադարձ է կատարվում է այն խնդիրներին, որոնք կարող են ընդհատել տեխնիկական սարքավորման աշխատանքը, ինչպես նաև բերվում են դրանց լուծման եղանակները:

ԱՄՍԱԹՎԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Քվեարկության նախորդ օրը մասնագետը տեխնիկական սարքավորումը միացնելուց հետո պարտավոր է ստուգել տեխնիկական սարքավորման **ԺԱՄԸ ԵՎ ԱՄՍԱԹԻՎԸ (օր, ամիս, տարեթիվ):**

Ժամը և ամսաթիվը կարելի է տեսնել էկրանի ձախ անկյունում՝

Հնարավոր է, անհրաժեշտություն առաջանա ուղղել տեխնիկական սարքավորման ժամը կամ ամսաթիվը:

! Ուշադրություն

- ⇨ **Մասնագետն անհապաղ կապ է հաստատում աջակցման կենտրոնի հետ, որպեսզի ստանա համապատասխան ԿՈԴ տեխնիկական սարքավորման ամսաթիվը կամ ժամն ուղղելու համար:**
- ⇨ **Մասնագետը պարտավոր է հետևել աջակցման կենտրոնի աշխատակցի հրահանգներին և դրանք ճշգրտորեն կատարել:**

Ամսաթիվը և ժամը փոխելու համար մասնագետը պարտավոր է.

- Մուտքագրել աջակցման կենտրոնից ստացված ՀԱՏՈՒԿ ԿՈԴԸ հետևյալ դաշտում:



- Ընտրել «Ամսաթիվ և ժամանակ» դաշտը:

Տեխնիկական սարքավորման էկրանին կհայտնվի հետևյալ պատուհանը:

- Ամսաթիվը փոխելու համար պետք է սեղմել **«Սահմանել ամսաթիվ»** կոճակը.
- Ժամը փոխելու համար պետք է սեղմել **«Սահմանել ժամանակ»** կոճակը.



⇨ Ընտրել տեխնիկական սարքավորման վրա սահմանվելիք ամսաթիվը, հետո սեղմել «Լավ» կոճակը



⇨ Ընտրել տեխնիկական սարքավորման վրա սահմանվելիք ժամը, հետո սեղմել «Լավ» կոճակը



Ուշադրություն

A – նշանակում է AM, 00:00-ից մինչև կեսօր՝ 12:59
P – նշանակում է PM, 12:00-ից մինչև կեսգիշեր՝ 23:59

Օրինակ՝
01 AM = 01:00
01 PM = 13:00

Քայլերը կատարելուց հետո համոզվել, որ էկրանին հայտնված ժամը և ամսաթիվը ճիշտ են (ի դեպ ժամը արդեն կցուցադրվի 24 ժամյա ռեժիմում:

Թղթի գլան

Տեխնիկական սարքավորման յուրաքանչյուր ճամպրուկ պարունակում է թղթի 4 գլան: Քվեարկության օրը սարքավորման մեջ տեղադրված թղթի գլանը կարող է վերջանալ կամ տպիչը կարող է խցանվել, երկու դեպքում էլ տեխնիկական սարքավորման վրա կհայտնվի հետևյալ էկրանը.



Թուղթը վերջացել է

Թղթի գլանի վերջին հատվածը նշված է կարմիր եզրագծով: Երբ վերոնշյալ էկրանի հետ մեկտեղ տպված կտրոնների կամ տեղեկանքների վրա սկսում է հայտվել կարմիր գիծը, սա նշան է, որ սարքավորման տպիչում առկա թուղթը վերջանում է, այս դեպքում մասնագետը պարտավոր է.

- Դադարեցնել ընտրողների գրանցումը:
- Բացել տեխնիկական սարքավորման տպիչի խցիկի կափարիչը:
- Հեռացնել օգտագործված գլանը:
- Տեխնիկական սարքավորման ճամպրուկից հանել թղթի մի նոր գլան և տեղադրել տպիչում (գլանը պետք է դրվի այնպես, որ թուղթը դուրս գա սարքի տպիչի խցիկի կափարիչի ճեղքից):
- Փակել տպիչի խցիկի կափարիչը:
- Սեղմել էկրանին հայտնված «**ԿՐԿԻՆ ՓՈՐՁԵԼ**» կոճակը:

Թղթի խցանում

Թղթի խցանման դեպքում ևս կհայտնվի վերոնշյալ էկրանը: Այս դեպքում մասնագետը պարտավոր է.

- Բացել տեխնիկական սարքավորման տպիչի խցիկի կափարիչը:
- Համոզվել, որ թղթի գլանը պատշաճ ձևով տեղադրված է տպիչում:
- Դուրս քաշել թղթի գլանը 5 սանտիմետրով:
- Փակել տպիչի խցիկի կափարիչը:
- Կտրել դուրս քաշած թղթի ավելորդ հատվածը:
- Սեղմել էկրանին հայտնված «ԿՐԿԻՆ ՓՈՐՁԵԼ» կոճակը:

Հարկադրված քնի ռեժիմ

Հարկադրված քնի ռեժիմի դեպքում ընտրողների գրանցման գործընթացը կարող է ընդհատվել մինչև քվեարկության կտրոնի տպումը կամ տպման ընթացքում: Այս պարագայում մասնագետը պարտավոր է.

- Սեղմած պահել անջատիչը երկու (2) վայրկյան էկրանը միացնելու համար:
- Մուտքագրել մասնագետի վեցանիշ կոդը:
- Էկրանին կհայտնվի հարց, թե արդյոք մասնագետը ցանկանում է տպել վերջին գրանցված ընտրողի քվեարկության կտրոնը:



- Մասնագետը պետք է սեղմի «ՈՉ», եթե մինչ գործընթացի ընդհատումը սարքը տպել էր քվեարկության կտրոնը: Այս դեպքում գրանցման գործընթացը կավարտվի և սարքի էկրանը կվերադառնա գլխավոր էջ:
- Մասնագետը պետք է սեղմի «ԱՅՈ», եթե մինչ գործընթացի ընդհատումը սարքը չէր տպել քվեարկության կտրոնը: «ԱՅՈ» կոճակը սեղմելուն պես սարքի վրա կհայտնվի տպման էկրանը, որը կթարթի, և սարքը կարձակի ձայնային ազդանշան (հինգ (5) վայրկյան): Վերջին գրանցված ընտրողի քվեարկության կտրոնը կտպվի՝ **վերևի հատվածում սև եզրագծով**:

Էլեկտրաէներգիայի անջատում

Մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս

Քվեարկության օրն էլեկտրաէներգիայի անջատման դեպքում անգամ մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացը կշարունակվի սովորական կարգով, քանի որ տեխնիկական սարքավորումը կշարունակի աշխատել ներքին մարտկոցի հաշվին:

Ներքին մարտկոցը նախատեսված է մինչև 6 ժամ ինքնուրույն աշխատանքի համար առանց հոսանքի աղբյուրին միանալու, ինչպես նաև կարող է սպասման ռեժիմում աշխատել ավելի քան 24 ժամվա ընթացքում: Ամբողջությամբ լիցքաթափվելուց հետո մարտկոցը կարող է ամբողջությամբ վերալիցքավորվել 4-ից 5 ժամվա ընթացքում:

Մարտկոցի լիցքի մակարդակն իմանալու համար պետք է ստուգել տեխնիկական սարքավորման աջ կողմում վառվող լույսերը:

- Մարտկոցի լիցքավորման ընթացքում սարքավորման լուսային նշանները թարթելու են:
- Մարտկոցն ամբողջությամբ լիցքավորվելուց հետո սարքավորման աջ կողմում վառվող լույսերը կմարեն:
- Լիցքավորման ռեժիմից դուրս մարտկոցի լիցքի մակարդակն իմանալու համար պետք է սեղմել սարքավորման լուսային նշանների մոտ գտնվող մարտկոցի կոճակը:
- Լուսային նշան(ներ)ը վառվում է (են) հետևյալ կանոններով.

    - 1 լուսային նշան՝ 0%-ից 19% մարտկոցի լիցք
    - 2 լուսային նշան՝ 20%-ից 39% մարտկոցի լիցք
    - 3 լուսային նշան՝ 40%-ից 59% մարտկոցի լիցք
    - 4 լուսային նշան՝ 60%-ից 79% մարտկոցի լիցք
    - 5 լուսային նշան՝ 80%-ից 99% մարտկոցի լիցք

Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամաս

Մեկից ավելի տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերում ևս էլեկտրաէներգիայի անջատման դեպքում տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացը կշարունակվի սովորական կարգով, քանի որ ռաուտերը միացված է լինելու UPS-ին, որն էլ տեխնիկական սարքավորմանը սնուցելու է հոսանքով: Ինչ վերաբերում է տեխնիկական սարքավորումներին, ապա դրանք կշարունակեն աշխատել իրենց ներքին մարտկոցների հաշվին:



Ներքին ցանցի խափանում

Այս բաժինը վերաբերում է միայն մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ ունեցող ընտրական տեղամասերին:

Տեխնիկական սարքավորման էկրանին կարելի է տեսնել ցանցի նշանը:

Մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ ունեցող ընտրական տեղամասում այս նշանը ցուցադրում է, թե արդյոք տեխնիկական սարքավորումը միացված է ներքին ցանցին:

Ներքին ցանցի նշանը ուղեկցվում է կանաչ կամ կարմիր նշաններով.

- Կանաչ V-աձև նշան՝ սարքը միացված է ներքին ցանցին:
- Կարմիր բացականչական նշան՝ սարքը միացված չէ ներքին ցանցին:



! Ներքին ցանցի նշանը ուղեկցվում է կարմիր բացականչական նշանով մեկ տեխնիկական սարքավորում ունեցող ընտրական տեղամասերում, քանի որ տեղամասում մեկ սարքավորում լինելու դեպքում այն աշխատում է առանձին ռեժիմով:

Տեխնիկական սարքավորման և ռաուտերի միջև կապի խափանման դեպքում տվյալ տեխնիկական սարքավորումը կարգելափակվի և չի կարողանա գրանցել ընտրողներին:

Եթե կապի խափանման պատճառը ռաուտերն է, ոչ թե տեխնիկական սարքավորում(ներ)ը, ապա ընտրական տեղամասի բոլոր տեխնիկական սարքավորումները կարգելափակվեն, և տեխնիկական սարքավորման միջոցով գրանցման գործընթացն ամբողջությամբ կընդհատվի:

Երկու դեպքում էլ մասնագետը պարտավոր է.

- Ստուգել արդյոք ռաուտերը միացված է՝ ըստ լուսային ազդանշանների:
- Ստուգել արդյոք ցանցային լարերը միացված են երկու ծայրերից:

Եթե վերոնշյալ երկու ստուգումներից հետո էլ ներքին ցանցի աշխատանքը չի վերականգնվում, ապա մասնագետը պարտավոր է.

- Տեղեկացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Զանգահարել տարածքային ընտրական հանձնաժողովի տեխնիկական աջակցության կենտրոն:
- Հետևել տեխնիկական աջակցության կենտրոնի աշխատակցի հրահանգներին:

Եթե ցանցի խափանում տեղի է ունեցել միայն որոշ տեխնիկական սարքավորումների հետ (ոչ բոլորի հետ), ապա ցանցային կապ ունեցող մյուս տեխնիկական սարքավորումները կարող են շարունակել ընտրողների գրանցման գործընթացը:

! Մասնագետները և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պետք է զգուշությամբ վարվեն տեխնիկական սարքավորումների՝ հատկապես ռաուտերի, ցանցային լարերի և հոսանքի լարերի հետ: Եթե լարերը սխալմամբ անջատվեն, ապա դա կհանգեցնի տեխնիկական սարքավորման արգելափակմանը:

Տեխնիկական սարքավորումը չի միանում

Եթե տեխնիկական սարքավորման անջատիչն ավելի քան հինգ (5) վայրկյան սեղմած պահելուց հետո անջատիչի լուսային նշանը չի միանում, ապա մասնագետը պարտավոր է.

- Ստուգել մարտկոցի լիցքը՝ սեղմելով սարքավորման լուսային նշանների մոտ գտնվող մարտկոցի կոճակը:
- Եթե մարտկոցը լիցքավորման ընթացքում է, ապա ըստ ներքին մարտկոցի լիցքավորման մակարդակի թարթում են համապատասխան թվով լուսային նշաններ:
- Երբ մարտկոցն ամբողջությամբ լիցքաթափված է, մարտկոցի կոճակը սեղմելիս որևէ լուսային նշան չի վառվում:

! Քվեարկության նախորդ օրը տեխնիկական սարքավորումը տեղադրելու պահից սկսած այն պետք է մշտապես միացված լինի հոսանքին մարտկոցի ամբողջական լիցքաթափումից խուսափելու համար:

- Մարտկոցն ամբողջությամբ լիցքավորվելուց հետո կվառվեն սարքավորման բոլոր 5 լուսային նշանները:
- Ստուգել միացումները տեխնիկական սարքավորման, հոսանքի լարի, հոսանքի տատանումներից պաշտպանող սարքի և վարդակի միջև:
- Համոզվել, որ հոսանքի տատանումներից պաշտպանող սարքի վրա կանաչ լույս է վառվում: Եթե վառվում է դեղին լուսային նշանը, ապա նշանակում է, որ շուտով հոսանքի մատակարարումը կկայունանա և կվառվի կանաչ լույսը: Եթե վառվում է կարմիր լուսային նշան, ապա առկա է հոսանքի հետ կապված խնդիր:

Էկրանը չի աշխատում

Տեխնիկական սարքավորման էկրանը հպազգայուն է: Եթե էկրանին դիպչելիս կամ սեղմելիս արձագանք չի ստացվում, ապա մասնագետը կարող է փորձել հետևյալ լուծումները.

- Էկրանը մաքրել՝ օգտագործելով դրա համար նախատեսված կտորը:
- Էկրանն անջատել՝ սեղմած պահելով անջատիչը երկու (2) վայրկյան, իսկ այն կրկին միացնելու համար նույն կոճակը սեղմած պահել կրկին երկու (2) վայրկյան և ստուգել էկրանի աշխատանքը:
- Եթե էկրանը դեռևս չի արձագանքում, ապա պետք է վերագործարկել տեխնիկական սարքավորումը (սեղմած պահել սարքավորման անջատիչը (ոչ պակաս քան 5 վայրկյան) մինչև կհայտնվի էկրան «ԱՆՋԱՏԵԼ» և «REBOOT» կոճակներով, սեղմել «REBOOT» կոճակը) և կրկին ստուգել էկրանի աշխատանքը:

Կարող է պատահել նաև, որ 10 րոպեի ընթացքում էկրանին չդիպչելու դեպքում տեխնիկական սարքավորումն անցի քնի ռեժիմ: Նման իրավիճակում սարքավորումն ակտիվ ռեժիմ վերադարձնելու համար մասնագետը պետք է երկու (2) վայրկյան սեղմած պահի անջատիչը, այնուհետև էկրանը միանալուց հետո՝ մուտքագրի մասնագետի կոդը:

Մատնահետքերի ընթերցման սկաները չի աշխատում

Եթե մատնահետքերի ընթերցման սկաները չի գրանցում մատնահետքերը, ապա մասնագետը պարտավոր է՝

- Համոզվել, որ մատը դրված է կայուն դիրքում և սարքը հասցնում է ընթերցել ստացված պատկերը:
- Որոշ դեպքերում լավ պատկեր ստանալու համար անհրաժեշտ է մատն ավելի ամուր սեղմել սկաներին:
- Մատնահետքերի ընթերցման սկաների լուսային նշանները թարթում են ակտիվ ռեժիմում և ցույց են տալիս, որ սարքը կարելի է գործարկել:
- Եթե մատնահետքերի ընթերցման սկաները դեռևս չի արձագանքում, ապա պետք է վերագործարկել տեխնիկական սարքավորումը (սեղմած պահել սարքավորման անջատիչը (ոչ պակաս քան 5 վայրկյան) մինչև կհայտնվի էկրան «ԱՆՋԱՏԵԼ» և «REBOOT» կոճակներով, սեղմել «REBOOT» կոճակը) և կրկին ստուգել մատնահետքերի ընթերցման սկաները:

Տեխնիկական սարքավորման անսարքության դեպքում

Տեխնիկական սարքավորման հետ տեղի ունեցող ցանկացած անսարքություն, որը կհանգեցնի տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցման գործընթացի դադարեցմանը, պետք է մասնագետի կողմից հաղորդվի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և տեխնիկական աջակցության կենտրոնի աշխատակցին:

Կապը տեխնիկական աջակցության կենտրոնի հետ

Եթե վերը նշված լուծումներից և ոչ մեկը չի օգնել լուծել առաջացած խնդիրը, կամ տեխնիկական սարքավորման աշխատանքն ընդհատել է որևէ այլ խնդիր, որը մասնագետը և հանձնաժողովի նախագահը չեն կարողացել լուծել, ապա տեխնիկական սարքավորման մասնագետի կողմից պետք է ձեռնարկվեն ներքոնշյալ քայլերը.

- Տեղեկացնել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին առաջացած դեպքի մասին:
- Զանգահարել տարածքային ընտրական հանձնաժողովի տեխնիկական աջակցության կենտրոն:
- Հետևել տեխնիկական աջակցության կենտրոնի աշխատակցի հրահանգներին:

6 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԿՈՄՊԼԵԿՏԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ և ՎԵՐԱԴԱՐՁ

Տեխնիկական սարքավորման անջատում և դասավորում

Ավարտական տեղեկանքը տպելուց հետո մասնագետը պարտավոր է.

- Սեղմել սարքավորման վերևի աջ անկյունում գտնվող բացվող ցանկի կոճակը:



- Ընտրել «ԵԼՔ» տարբերակը:
- Սեղմել «ԱՅՈ» հաստատելու համար գործողությունը:
- Սեղմած պահել սարքավորման անջատիչը (ոչ պակաս քան 5 վայրկյան) մինչև կհայտնվի էկրան՝ «ԱՆՋԱՏԵԼ» և «REBOOT» կոճակներով:
- Սեղմել «ԱՆՋԱՏԵԼ» կոճակը:
- Անջատել UPS-ը (դրա առկայության դեպքում)՝ սեղմելով անջատիչը:
- Անջատել ռաուտերը (դրա առկայության դեպքում)՝ սեղմելով անջատիչը:
- Անջատել տեխնիկական սարքավորման(ների) հոսանքի լար(եր)ը:
- Անջատել ռաուտերի հոսանքի լարը և ցանցային լարերը (դրանց առկայության դեպքում):
- Անջատել UPS-ի (դրա առկայության դեպքում) հոսանքի լարը վարդակից:
- Տեղավորել տեխնիկական սարքավորում(ներ)ը և դրա(նց) հոսանքի լար(եր)ը ճամպրուկ(ներ)ում:
- Եթե քվեարկության օրը տեղի է ունեցել տեխնիկական սարքավորման կամ այլ սարքի խափանում, ապա այդ մասին նշվում է առանձին թղթի վրա և սարքավորման հետ միասին դրվում ճամպրուկի (կամ այլ սարքերի դեպքում իրենց տուփերի) մեջ:

Տեխնիկական սարքավորման կոմպլեկտի վերադարձ

Մասնագետ(ներ)ի կողմից տեխնիկական սարքավորում(ներ)ը անջատելուց և ճամպրուկում համապատասխան բաղադրիչների հետ դասավորելուց հետո մասնագետը հանձնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և կարող է հեռանալ տեղամասային կենտրոնից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը տեխնիկական սարքավորում(ներ)ը և մյուս պարագաները ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողով:

7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԹՂԹԻ ԳԼԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ

ԱՆՁՆԱԳՐԻ ՆՄՈՒՇ

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԻ ՆՄՈՒՇ

ԿԵՆՍԱԶԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՆՄՈՒՇ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՄՈՒՇ (9-ՐԴ ՁԵՎ)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2012 թվականի
ապրիլի 5-ի N 411-Ն որոշման

_____
(ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայություն)

_____ _____ 20 թ.

00015100

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԿԱՅԱԿԱՆ N_____

Քաղ. _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը)

_____
(հանրային ծառայությունների համարանիշը)

(լուսանկար)

տրվել է նույնականացման քարտի փոխանակման (կորստի, վավերականության ժամկետը լրանալու) կապակցությամբ կամ ազատազրկման դատապարտված անձի դիմումի հիման վրա (ընդգծել)

_____ _____ 20 թ.-ին:

Վկայականն ուժի մեջ է մինչև _____ _____ 20 թ.

Անձնագրային ծառայության պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____
(ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային ծառայություն)

<<____>> _____ _____
(տրման ամ AP05500 (դիմումի մուտքի համարը)

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՏՐՎՈՂ՝ ԱՆՁԸ (ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ) ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Քաղ. _____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, վայրը)

_____
(հաշվառման հասցեն)

Տրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիրը կորցնելու կամ փոխանակման ներկայացնելու կապակցությամբ անձի դիմումի հիման վրա (ընդգծել):

Կ. Տ

Փաստաթուղթն ուժի մեջ է մինչև <<____>> _____ 20 թ.

Անձնագրային ծառայության պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

ՍՏՈՒԳՄԱՆ, ԱԿՏԻՎԱՑՄԱՆ և ՄԱՍՆԱԳԵՏԻ ԿՈԴԵՐ

Քվեարկության նախորդ օրը՝ մուտքագրել ստուգման վեցանիշ կոդը	**111111**
Քվեարկութան օրը՝ սկզբից մուտքագրել ակտիվացման վեցանիշ կոդը	**222222**
Քվեարկության օրը, ակտիվացումից հետո՝ մուտքագրել մասնագետի վեցանիշ կոդը	**առկա է մասնագետի կոդը պարունակող ծրարում**